


Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն
ՓԲԸ

31 դեկտեմբերի 2023թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ
Պետական Հիմնարկին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն Փակ Բաժնետիրական Ընկերության և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:



Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

28 մարտի 2024թ.



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	11,062,337	11,217,179
Ոչ նյութական ակտիվներ	5	570,653	563,401
		<u>11,632,990</u>	<u>11,780,580</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		54,620	58,366
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	495,755	763,187
Այլ ընթացիկ ակտիվներ		6,305	4,367
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	394,092	1,602,868
		<u>950,772</u>	<u>2,428,788</u>
Ընդամենը ակտիվներ		<u>12,583,762</u>	<u>14,209,368</u>

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Գապիտալ և պահուստներ	8		
Կանոնադրական կապիտալ		2,391,107	2,391,107
Էմիսիոն եկամուտ		755	755
Վերագնահատման պահուստ		5,603,775	5,603,775
Պահուստային կապիտալ		356,319	283,599
Կուտակված շահույթ		934,009	783,151
		9,285,965	9,062,387
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	9	150,000	262,500
Հետաձգված եկամուտ	10	1,341,540	1,780,748
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	1,088,368	1,162,878
		2,579,908	3,206,126
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր, ընթացիկ	9	316	87,500
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	683,034	1,763,197
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		34,539	90,158
		717,889	1,940,855
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		12,583,762	14,209,368

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մարտի 28-ին:

Հովհաննես Մովսիսյան

Գործադիր տնօրեն

Աննա Սիրադեղյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հիմնական գործունեությունից հասույթ	13	5,280,683	5,272,508
Գովազդից և հովանավորչությունից հասույթ	14	780,203	655,709
Դրամաշնորհներից եկամուտ	15	504,098	596,051
Այլ եկամուտ	16	491,820	237,110
Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր	17	(1,739,646)	(2,002,965)
Հեռարձակման ծախսեր	18	(231,991)	(246,063)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(2,861,400)	(2,782,892)
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,074,304)	(967,149)
Այլ ծախսեր	19	(584,949)	(487,517)
Ֆինանսական եկամուտ/(ծախս), զուտ		(267)	(20,423)
Հիմնական միջոցների արժեզրկումից ծախս		-	(261,276)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		4,229	17,800
Գործառնական գործունեությունից շահույթ		568,476	10,893
Մշակութային միջոցառումների կազմակերպումից հասույթ	20	-	4,340,197
Մշակութային միջոցառումների կազմակերպումից ծախսեր	20	-	(3,823,935)
Շահույթ մինչև հարկերը		568,476	527,155
Շահութահարկի գծով ծախս	21	(83,702)	(182,786)
Տարվա շահույթ		484,774	344,369
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	4,968,022
Հետաձգված հարկի ազդեցություն		-	(894,244)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	4,073,778
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		484,774	4,418,147

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրություններ ի հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

	Կանոնա- դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնա- հատման պահուստ	Պահուս- տային կապիտալ	Կուտակ- ված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,072,293	755	1,598,918	256,503	715,771	4,644,240
Տարվա շահույթ	-	-	-	-	344,369	344,369
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	344,369	344,369
Կանոնադրական կապիտալի համալրում	318,814	-	-	-	(318,814)	-
Գործարքներ սեփականատերերի հետ	318,814	-	-	-	(318,814)	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	4,073,778	-	-	4,073,778
Վերագնահատման պահուստի օգտագործում	-	-	(68,921)	-	68,921	-
Պահուստային կապիտալի աճ	-	-	-	27,096	(27,096)	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,391,107	755	5,603,775	283,599	783,151	9,062,387
Տարվա շահույթ	-	-	-	-	484,774	484,774
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	484,774	484,774
Շահաբաժիններ	-	-	-	-	(261,196)	(261,196)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	(261,196)	(261,196)
Պահուստային կապիտալի աճ	-	-	-	72,720	(72,720)	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,391,107	755	5,603,775	356,319	934,009	9,285,965

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի
այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ
էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ	484,774	344,369
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,353,403	1,474,789
Հիմնական միջոցների արժեզրկում	-	261,276
Շնորհներից եկամուտ	(504,098)	(592,801)
Ֆինանսական ծախս	21,491	20,423
Շահութահարկի գծով ծախս	83,702	182,786
Ֆինանսական եկամուտ	(21,224)	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(4,229)	(17,800)
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>1,413,819</u>	<u>1,673,042</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	271,522	(392,231)
Պահուստների փոփոխություն	3,746	(38,345)
Այլ ակտիվների փոփոխություն	(2,542)	5,593
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	<u>(1,080,163)</u>	<u>1,109,942</u>
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	<u>606,382</u>	<u>2,358,001</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից ստացված դրամական միջոցներ	48,366	-
Վճարված տոկոսներ	(21,175)	(20,423)
Վճարված շահութահարկ	(213,831)	(171,047)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>419,742</i>	<i>2,166,531</i>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,190,053)	(1,204,078)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	765	-
Ստացված տոկոսային եկամուտ	21,224	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<i>(1,168,064)</i>	<i>(1,204,078)</i>
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վարկերից և փոխառություններից և վարձակալական պարտավորությունների գծով մուտքեր/(ելքեր)	(200,000)	350,000
Վճարված շահաբաժիններ	(261,196)	-
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<i>(461,196)</i>	<i>350,000</i>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(1,209,518)	1,312,453
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	742	(18,719)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,602,868	309,134
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	394,092	1,602,868

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս
համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում
ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ-ի («Մայր Ընկերություն») և նրա դուստր ընկերության «Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») կառավարության 2001թ. հուլիսի 4-ի թիվ 592 որոշմամբ:

Մայր Ընկերության ստեղծման նպատակը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման գործունեության իրականացումն է՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Մայր Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկին:

Մայր Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փողոց 26:

«Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2020թ.-ի օգոստոսի 18-ին, որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փողոց 26:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ.-ին կազմել է 577 մարդ (2022թ.՝ 572 մարդ):

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեյջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի

Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր և տնտեսվարող սուբյեկտների վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.3 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հողամասերի և շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոնշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ.-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
<i>ՖՀՄՄ 3</i>	<i>Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՄ 3 փոփոխություններ)</i>
<i>ՀՀՄՄ 16</i>	<i>Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՄ 16 փոփոխություններ)</i>
<i>ՀՀՄՄ 37</i>	<i>Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՄ 37 փոփոխություններ)</i>
<i>ՖՀՄՄ 1, ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 41, ՖՀՄՄ 16</i>	<i>2018-2021թ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՄ 1, ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 41, ՖՀՄՄ 16 փոփոխություններ)</i>

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշ նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՄ 17	Փոփոխություններ ապահովագրական պայմանագրերում՝ ՖՀՄՄ 17, ներառյալ ՖՀՄՄ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՄ 4 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՄ 12	Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՄ 12 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՄ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՄ 1 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՄ 8	Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՄ 8 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՄ 1	Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՄ 1 և կիրառություն 2)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՄ 16	Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՄ 16 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՄ 1	Ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.

2.6 Դուստր ընկերություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է հետևյալ դուստր ընկերությունը.

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	Մասնա-բաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռք-բերման ամսաթիվ
“Նորք գոցվագդային գործակալություն” ՍՊԸ	100	Հայաստան	2020թ. օգոստոսի 18	Գովազդ	2020թ. օգոստոսի 18

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են Մայր Ընկերության և իր դուստր ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմաբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նույնպես ենթարկվում է արժեզրկման ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

3.2 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները չափվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվեկշռային արժեքն աճեցվում կամ նվազեցվում է ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ արդյունքում Խմբի շահաբաժինը ճանաչելու համար՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով գումարները, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպությունների միջև գործարքների արդյունքում առաջացած չվաստակած օգուտները և չկրած վնասը բացառվում են Խմբի՝ այդ կազմակերպություններում բաժնեմասնակցության չափով: Երբ ակտիվի չկրած վնասը բացառվում է, հիմքում ընկած ակտիվը նույնպես ենթարկվում է արժեզրկման ստուգման:

Խմբի ասոցիացված կազմակերպության ներդրման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 28-ում:

3.3 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.4 Հիմնական միջոցներ

Հողերը և շենքերը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է գուտ արժեքը:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Մակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատված հիմնական միջոցի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20-25 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-10 տարի
Տնտեսական գույք և այլ	- 1-5 տարի
Արտադրական գույք, գործիքներ	- 1-5 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	- 1-5 տարի
Արտադրական գույք մինչև 50,000 դրամ արժողությամբ	- 1 տարի
Այլ հիմնական միջոցներ (այդ թվում տնտեսական գույք և դեկորներ)	- 1-5 տարի

3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ճանաչվում են այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- ակտիվը վերահսկվում է Խմբի կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը: Հետագա ծախսումները կապիտալացվում են ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի վրա, եթե ակնկալվում է, որ դրանց վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ:

Խմբի որոշ ոչ նյութական ակտիվների ճանաչման առանձնահատկությունները ներկայացված են ստորև.

Լիցենզիաներ

Խմբի կողմից հաղորդումներ, ֆիլմեր և այլ ծրագրեր հեռարձակելու իրավունք տրամադրող լիցենզիոն պայմանագրերի կնքման արդյունքում առաջանում են ոչ նյութական ակտիվներ. Դրանք ճանաչվում են լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից:

Ֆիլմեր, հաղորդումներ

Խմբի կողմից գնված ֆիլմերը և հաղորդումները ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, եթե բավարարում են ոչ նյութական ակտիվի ճանաչման պահանջները:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում հետևյալ կերպ.

- Ֆիլմերն ամորտիզացվում են 3-ից 10 տարվա ընթացքում՝ կախված դրանց յուրահատկություններից:
- Երգերի նկատմամբ բացառիկ իրավունքներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Ծրագրերի և ֆիլմերի գծով ստացված լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Հայ դասականների ստեղծագործությունների էկրանավորումները, Երևան ստուդիայի նյութերը (միակը Հանրապետությունում) և պատմական ֆիլմերը ամորտիզացվում են 30 տարվա ընթացքում:

- Սպորտային և այլ միջազգային միջոցառումների հեռարձակման գծով ստացված արտասահմանյան լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Համակարգչային ծրագրերն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Ապրանքային նշաններն ամորտիզացվում են 10 տարվա ընթացքում:

Խմբի գործունեության առանձնահատկություններից ելնելով վերը նշված ամորտիզացիայի ժամկետները սահմանվում են այդ նպատակով ստեղծված Խմբի մասնագիտական հանձնաժողովի որոշումներով:

Ընթացիկ հաղորդումներ

Հաշվի առնելով, որ Խմբի գործունեությունը հաղորդումների պատրաստումն ու եթեր հեռարձակումն է, հաղորդումների պատրաստման հետ կապված բոլոր ծախսերը ծախսագրվում են՝ դրանց կատարման ժամանակաշրջանում:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը և հետագա չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և ֆինանսական եկամուտում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

Ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը և հետագա չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև ստացված վարկերը, որոնք ճանաչվում են

իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

3.8 Սեփական կապիտալ

Մայր Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նումինալ արժեքը: Վերագնահատման պահուստը ներառում է հողի և շենքերի վերագնահատումից աճը: Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պետական շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Խմբի կանոնադրական նպատակների համար ստացված շնորհը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն տարում, երբ դրանք ստացվել են:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն

եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները

3.11 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-րդ պլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հովանավորչական եկամուտ

Հովանավորչական եկամուտները գոյանում են հովանավորների մասին հեռահաղորդումների ցուցադրման ժամանակ տեղեկությունների տեղադրումից: Այն ճանաչվում է կնքված պայմանագրերի դրույթներից ելնելով՝ ծառայության փաստացի մատուցման պահին:

Գովազդից հասույթ

Առաջանում է գովազդի տեղադրումից և ճանաչվում է գործարքի փաստացի իրականացման ժամանակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հասույթը ճանաչվում է կնքված պայմանագրերի համաձայն, ծառայության փաստացի մատուցման ժամանակ:

Դրամաշնորհներից եկամուտ

Դրամաշնորհներից եկամտի ճանաչման քաղաքականությունները ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հող, շենքեր և շինություն- ներ	Արտադրական տնտեսական գույք տրանսպոր- տային միջոցներ	Անավարտ շինարա- րություն	Ընդամենը
<i>Սկզբնական/վերագնահատված արժեք</i>				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	5,543,657	9,811,113	1,066	15,355,836
Ավելացում	18,678	875,518	14,536	908,732
Ներքին շարժ	-	12,395	(12,395)	-
Վերագնահատումից արժեքի աճ	4,968,022	-	-	4,968,022
Վերագնահատման հետևանքով դուրսգրում	(1,386,538)	-	-	(1,386,538)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,143,819	10,699,026	3,207	19,846,052
Ավելացում	-	695,492	201,019	896,511
Օտարում	-	(373)	(765)	(1,138)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,143,819	11,394,145	203,461	20,741,425
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,185,254	7,618,857	-	8,804,111
Տարվա հաշվարկ	201,284	748,740	-	950,024
Արժեզրկումից կորուստ	261,276	-	-	261,276
Վերագնահատման հետևանքով դուրսգրում	(1,386,538)	-	-	(1,386,538)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	261,276	8,367,597	-	8,628,873
Տարվա հաշվարկ	151,734	898,854	-	1,050,588
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(373)	-	(373)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	413,010	9,266,078	-	9,679,088
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,882,543	2,331,429	3,207	11,217,179
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,730,809	2,128,067	203,461	11,062,337

Խմբի հիմնական միջոցները գրավադրված չեն:

Խմբի հողերը և շենքերը վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողների կողմից 2023թ. հունվարի 1-ի դրությամբ: Գնահատումը կատարվել է՝ հիմնվելով շուկայում վերջերս իրականացված գործարքների վրա՝ «պարզած ձեռքի հեռավորության» պայմանով: Վերագնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,761,566 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,096,439 հազար դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գրոյական հաշվեկշռային արժեքով:

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Համակարգչային ծրագրեր	Ֆիլմեր, լիցենզիաներ, սցենարներ, ապրանքային նշաններ և այլն	Անավարտ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	81,974	1,080,040	33,852	1,195,866
Ավելացում	15,410	274,936	5,000	295,346
Օտարում	(15,246)	(375,023)	-	(390,269)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	82,138	979,953	38,852	1,100,943
Ավելացում	21,903	281,485	6,679	310,067
Օտարում	-	(157,783)	-	(157,783)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,041	1,103,655	45,531	1,253,227
<i>Կուտակված ամորտիզացիա</i>				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	60,014	343,031	-	403,045
Տարեկան ամորտիզացիա	17,846	506,920	-	524,766
Ամորտիզացիայի դուրս գրում	(15,246)	(375,023)	-	(390,269)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	62,614	474,928	-	537,542
Տարեկան ամորտիզացիա	29,123	273,692	-	302,815
Ամորտիզացիայի դուրսգրում	-	(157,783)	-	(157,783)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	91,737	590,837	-	682,574
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,524	505,025	38,852	563,401
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,304	512,818	45,531	570,653

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	391,457	521,949
Պետական բուջեի գծով և այլ կանխավճարներ	104,298	189,615
Հետաձգված հարկեր ԱԱՀ-ի գծով	-	51,623
	<u>495,755</u>	<u>763,187</u>

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Տե՛ս ծանոթագրություն 24՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	-	1,282
Բանկային հաշիվներ	378,056	1,600,226
Դրամական միջոցներ ճանապարհին	16,036	1,360
	<u>394,092</u>	<u>1,602,868</u>

Տե՛ս ծանոթագրություն 24՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Կապիտալ և պահուստներ

8.1 Կանոնադրական կապիտալ

Խմբի կանոնադրական կապիտալը կազմում է 2,391,107 հազար դրամ (2022՝ 2,391,107 հազար դրամ): Այն բաժանված է 15,940,712 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 150 դրամ անվանական արժեքով (2022՝ 15,940,712 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 150 դրամ անվանական արժեքով):

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Ընկերության միակ բաժնետերեր: Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկի 2022թ. օգոստոսի 17-ի N45-Լ որոշման՝ Մայր Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացել է 308,664 հազար դրամով՝ շահութաբաժնի չափով մեծացել է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը: Ի լրումն, ելնելով բաժնետոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքի հստակեցման անհրաժեշտությունից, կանոնադրական կապիտալն ավելացել է ևս 10,150 հազար դրամով՝ մեծացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

8.2 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Մայր Ընկերության կանոնադրությամբ: Համաձայն Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկի 2023թ. հունիսի 30-ի N43-Լ որոշման՝ Խմբի պահուստային կապիտալը համալրվել է 72,720 հազար դրամի չափով (2022 թ.՝ 27,096 հազար դրամ):

8.3 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հողի և շենքերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատված հողի և շենքերի օգտագործմանը զուգահեռ, ինչպես նաև դրանց օտարման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին:

9 Վարկեր

Հազար դրամ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային վարկ	316	87,500	150,000	262,500
	316	87,500	150,000	262,500

Բանկային վարկն ունի 3 տարի մարման ժամկետ և տարեկան 11% միջին տոկոսադրույք: Վարկն ապահովված է 6.5 միլիարդ դրամ ֆինանսական հոսքերով:

10 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	1,780,748	2,373,549
Ավելացում	64,891	-
Եկամտի ճանաչում	(504,099)	(592,801)
Տարեվերջի մնացորդ	1,341,540	1,780,748

11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	(1,162,878)	(295,959)
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 21)	74,510	27,325
Դեբետագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքին	-	(894,244)
Տարեվերջի մնացորդ	(1,088,368)	(1,162,878)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Շնորհներ	-	10,608	10,608
Առևտրային կրեդիտորական պարտքեր	42,568	2,535	45,103
	42,568	13,143	55,711
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	1,205,879	(62,413)	1,143,466
Ոչ նյութական ակտիվներ	(433)	1,046	613
	1,205,446	(61,367)	1,144,079
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(1,162,878)	74,510	(1,088,368)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույ- թում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Ոչ նյութական ակտիվներ	-	-	433	433
Առևտրային կրեդիտորական պարտքեր	38,501	-	4,067	42,568
	<u>38,501</u>	<u>-</u>	<u>4,500</u>	<u>43,001</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Հիմնական միջոցներ	335,251	894,244	(23,616)	1,205,879
Ոչ նյութական ակտիվներ	(791)	-	791	-
	<u>334,460</u>	<u>894,244</u>	<u>(22,825)</u>	<u>1,205,879</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	<u>(295,959)</u>	<u>(894,244)</u>	<u>27,325</u>	<u>(1,162,878)</u>

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարները վերաբերում են հողերի և շենքերի վերագնահատմանը:

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	275,406	557,010
Հաճախորդներից կանխավճարներ	24,627	5,018
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	131,872	963,578
Փոխհատուցումներ աշխատակիցների	251,129	237,104
Այլ	-	487
	<u>683,034</u>	<u>1,763,197</u>

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

13 Հիմնական գործունեությունից հասույթ

2023թ. հասույթն առաջացել է 2022թ. դեկտեմբերի 29-ին (2022թ.՝ 2021թ. դեկտեմբերի 30-ին) Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ ՊՀ-ի հետ մայր Շնկերության կողմից կնքված պայմանագրի իրականացումից, որը վերաբերում է պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման հետ:

14 Գովազդից և հովանավորչությունից հասույթ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ գովազդից	774,886	575,042
Հասույթ հովանավորչությունից	5,317	80,667
	<u>780,203</u>	<u>655,709</u>

Հասույթ գովազդից

Գովազդային հասույթը գոյանում է սոցիալական և առևտրային բնույթի գովազդների տեղադրումից, որի համար Խումբը պայմանագրեր է կնքում, ինչպես առևտրային, այնպես էլ հասարակական կազմակերպությունների հետ:

Հասույթ հովանավորչությունից

Հովանավորչական հասույթը գոյանում է հովանավորների մասին հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ տեղեկությունների տեղադրումից:

15 Դրամաշնորհներից եկամուտ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	498,414	576,578
Անհատույց ստացված հոդամասի գծով շնորհներից եկամուտ	5,684	19,473
	<u>504,098</u>	<u>596,051</u>

16 Այլ եկամուտ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից	246,770	111,809
Ֆիլմերի ցուցադրումից և այլ առևտրային եկամուտներ	183,567	67,945
Եկամուտներ նախընտրական քարոզարշավից	8,255	-
Եկամուտներ հեռարձակումից և վերահեռարձակումից	43,820	48,487
Կրեդիտորական պարտքերի դուրս գրումից	3,462	3,369
Այլ եկամուտ	5,946	5,500
	<u>491,820</u>	<u>237,110</u>

Եկամուտներ ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից

Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտները գոյանում է երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերի համաձայն ֆիլմերի նկարահանումներից, կնքված պայմանագրերի շրջանակներում տարաբնույթ ծրագրերի պատրաստումից, ինչպես նաև ընկերությունների գործունեության լուսաբանումից:

17 Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ձեռքբերված և պատրաստված ֆիլմերի և հաղորդումների արժեք	1,293,710	1,322,498
Ֆիլմերի և հաղորդումների իրավունքի ամորտիզացիա	279,028	561,760
Այլ	166,908	118,707
	<u>1,739,646</u>	<u>2,002,965</u>

18 Հեռարձակման ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արբանյակային հեռարձակում	130,427	142,409
Տեղական հեռարձակում	75,000	74,113
Բնութընտային հեռարձակում	26,564	29,541
	<u>231,991</u>	<u>246,063</u>

19 Այլ ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործակալական վճարներ	69,440	58,694
Գովազդային գործունեության հետ կապված ծախսեր	61,070	21,654
Տրանսպորտային ծախսեր	44,677	53,655
Կոմունալ ծառայություններ	91,376	92,378
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	61,186	41,893
Նորությունների և տեղեկատվության ձեռքբերում	20,436	21,866
Պահպանման ծախսեր	36,965	50,150
Հեռահաղորդակցության ծառայություններ	19,732	19,998
Արտադրական նյութեր և պահեստամասեր	63,694	53,624
Չփոխհատուցվող հարկեր	8,838	8,287
Գրասենյակային ծախսեր	4,942	4,401
Այլ	102,593	60,917
	<u>584,949</u>	<u>487,517</u>

20 Մշակութային միջոցառումների կազմակերպումից հասույթ և ծախսեր

Մշակութային միջոցառումների կազմակերպումից հասույթն և ծախսերը վերաբերվում են 2022թ.-ի դեկտեմբերի 11-ին Հայաստանում «Մանկական Եվրատեսիլ 2022թ.» երգի մրցույթը կազմակերպելուն և իրականացնելուն:

21 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	158,212	210,111
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 11)	(74,510)	(27,325)
	<u>83,702</u>	<u>182,786</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	568,476		527,155	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	102,326	18.00	94,888	18.00
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(18,624)	(3.28)	87,898	16.67
Շահութահարկի գծով ծախս	83,702	14.72	182,786	34.67

22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

22.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Ինչպես բացահայտված է ծանոթագրություն 3.5-ում՝ Խմբի կողմից ոչ նյութական ակտիվները հաշվառվում է սկզբնական արժեքով: Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Խմբի գործունեության առանձնահատկություններից ելնելով վերը նշված ամորտիզացիոն ժամկետները սահմանվում են այդ նպատակով ստեղծված Խմբի մասնագիտական հանձնաժողովի

որոշումներով: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում համախմբված ֆինանսական հաշվետվությունը կարող են էականորեն տարբերվել:

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	391,457	521,949
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	394,092	1,602,868
	<u>785,549</u>	<u>2,124,817</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	275,406	557,497
Փոխհատուցումներ աշխատակիցներին	251,129	237,104
Վարկեր	150,316	350,000
	<u>676,851</u>	<u>1,144,601</u>

24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Խմբի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և բանկերում

մնացորդները, ներառյալ ժամկետային ավանդները: Խումբը կարգավորում է այս ռիսկը դրամական միջոցները հեղինակավոր բանկերում պահելու միջոցով: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հավաքագրման հետ կապված ռիսկերը շատ փոքր են: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	391,457	521,949
Մնացորդներ բանկերում	378,056	1,600,226
	<u>769,513</u>	<u>2,122,175</u>

բ) Արտարժույթային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական դեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	46,106	26,559	5,908
Մնացորդներ դրամարկդում և բանկերում	4,225	4,811	8,728
	<u>50,331</u>	<u>31,370</u>	<u>14,636</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21,511	7,372	11,030
	<u>21,511</u>	<u>7,372</u>	<u>11,030</u>
Զուտ արդյունք	<u>28,820</u>	<u>23,998</u>	<u>3,606</u>

Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	34,417	34,198	7,156
Մնացորդներ դրամակրդում և բանկերում	98,762	15,291	-
	<u>133,179</u>	<u>49,489</u>	<u>7,156</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,676	43,408	12
	<u>17,676</u>	<u>43,408</u>	<u>12</u>
Զուտ արդյունք	<u>115,503</u>	<u>6,081</u>	<u>7,144</u>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ դրամի 10% (2022թ. 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ. 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ. 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ 10%-ով (2022թ. 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլար		Եվրո		Այլ	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Շահույթ կամ վնաս	2,882	11,550	2,400	608	361	714
	<u>2,882</u>	<u>11,550</u>	<u>2,400</u>	<u>608</u>	<u>361</u>	<u>714</u>

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

զ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկդում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	275,406	316	275,722
6 ամսից մինչև 1 տարի	251,129	-	251,129
1-5 տարի	-	150,000	150,000
	<u>526,535</u>	<u>150,316</u>	<u>676,851</u>

2022թ.

	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով		
	Անտոկոս		Ընդամենը
Մինչև 6 ամիս	557,497	87,500	644,997
6 ամսից մինչև 1 տարի	237,104	-	237,104
1-5 տարի	-	262,500	262,500
	794,601	350,000	1,144,601

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը և ստացվելիք դրամաշնորհները: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը բավարար են անհրաժեշտ դրամական արտահոսքերը կատարելու համար: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

25 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

25.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում:

Իրական արժեքը որոշվել է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից նմանատիպ պայմաններով անշարժ գույքի համար հայտարարված վաճառքի գների հիման վրա, կիրառելով 0.6-ից 1.2 տիքրություն ընկած գործակիցներ՝ օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից տարբերությունների (առկայության դեպքում) հետ կապված ելակետային գները ճշգրտելու համար: Հողերի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող

գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):.

26 Կապիտալի ռիսկի կառավարում

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ):

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ	9,296,494	9,062,387
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(394,092)	(1,602,868)
Կապիտալ	8,902,402	7,459,519
Ընդհանուր սեփական կապիտալ	9,296,494	9,062,387
Վարկեր	150,316	350,000
Ընդհանուր ֆինանսավորում	9,446,810	9,412,387
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.94	0.79

27 Պայմանականություններ

27.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային

պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

28 Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ասոցիացված կազմակերպություններում ներդրումը ներառում է Մայր Ընկերության ներդրումը «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ սեփական կապիտալի 50 տոկոսում: Ներդրման գումարը չի ներկայացվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ հաշվետու ամսաթվի դրությամբ այն մոտ էր զրոյին:

Խմբի ասոցիացված կազմակերպության վերաբերյալ ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը ակտիվներ	424,242
Ընդամենը պարտավորություններ	(482,020)
Զուտ պարտավորություններ	(57,778)
Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընդամենը հասույթ	1,015,490
Ընդամենը տարվա շահույթ	6,962

29 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են ստորև նշված ընկերությունները, որոնք Խմբի հետ միասին գտնվում են Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկի կառավարման ներքո.

- Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն ՓԲԸ,
- Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ:

Կապակցված կողմ է նաև Խմբի ասոցիացված կազմակերպությունը՝ «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ:

29.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

- Խումբն իր մատուցված ծառայությունների դիմաց գումարները ստանում է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկից, որը 2023թ. -ի համար կազմել 5,280,683 հազար դրամ առանց ԱԱՀ (2022թ.՝ 9,437,659 հազար դրամ առանց ԱԱՀ)
- Խումբն իր ասոցիացված կազմակերպության նկատմամբ ծախսը կազմել է 401,836 հազար դրամ (2022թ.՝ 333,326 հազար դրամ):
- Խմբի կողմից Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ-ի նկատմամբ ծախսը կազմել է 3,200 հազար դրամ առանց ԱԱՀ (2022թ.՝ 0):

29.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ կանոնադրական կապիտալում մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	215,195	229,555
	<u>215,195</u>	<u>229,555</u>